

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

28.09. 2018թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրություններին
մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների
նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ
հայտարարագրերի ստուգման արդյունքների**

Երևանի ավագանու 2018թ. սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 7 օրվա ընթացքում նախընտրական քարոզչությանն ուղղված ծախսեր կատարելու նպատակով Կենտրոնական բանկում բացել են նախընտրական հիմնադրամներ:

Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Կենտրոնական բանկից 3 աշխատանքային օրը մեկ, Կենտրոնական ընտրական հանձնաձևաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (այսուհետ՝ վերահսկիչ - վերստուգիչ ծառայություն) ստացվել են տեղեկանքներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում մուտքերի և ելքերի վերաբերյալ, որոնց հիման վրա վերահսկիչ - վերստուգիչ ծառայության կողմից կազմվել են ամփոփ տեղեկանքներ և տեղադրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Տեղեկանքներն իրենց մեջ ներառել են տեղեկություններ կուսակցությունների և

կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և ծախսերի չափերի, դրանց ժամանակագրության, ինչպես նաև հիմնադրամներում մնացորդների վերաբերյալ:

Շտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 10-րդ օրը և ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ քան 3 օր առաջ վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն և ներկայացրել իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և պայմանագրերը: Հայտարարագրերն իրենց մեջ տեղեկություններ են ներառել նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց ժամանակագրության, ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի և դրանց ժամանակագրության, ձեռքբերման ծախսերը հավաստող փաստաթղթերի, դեռ չվճարված պարտավորությունների չափերի մասին: Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը նախընտրական հիմնադրամներում մուծումների և ծախսերի վերահսկողությունն իրականացրել է՝

- Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքների

- Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված հայտարարագրերի

- Հիմնադրամից կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի

- Ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստացված տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նախընտրական հիմնադրամներում առկա է ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտի կողմից նախընտրական հիմնադրամում մուծված գումարի առավելագույն չափի գերազանցում: Մասնավորապես՝

Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության ՀՀ Կենտրոնական բանկում բացված նախընտրական հիմնադրամի հաշվին ֆիզիկական անձ հանդիսացող Հայարփի Մագրադյանի կողմից մուծվել է 120.000 դրամ:

Ընտրական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամում մուծում կատարել մինչև նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով գումար (այսինքն՝ 100 000) դրամ:

Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն նախընտրական հիմնադրամ մուծված առավելագույն չափը գերազանցող գումարը, այսինքն 20.000 դրամը փոխանցվել է պետական բյուջե:

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվել են քվեարկության օրվանից:

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված դիմումների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար: Մասնավորապես՝

- ԼՈՒՅՍ կուսակցությունների դաշինքի կողմից 26.09.2018թ.-ին մարվել է 3 583 840 դրամի պարտավորություն.
- Բարգավաճ Հայաստան կուսակցության կողմից 26.09.2018թ.-ին մարվել է 407 000 դրամի պարտավորություն.
- Ռեֆորմիստների կուսակցության կողմից 26.09.2018թ.-ին մարվել է 2 000 դրամի պարտավորություն.
- Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության կողմից 28.09.2018թ.-ին մարվել է 398 367 դրամի պարտավորություն.

Նախընտրական քարոզչության և դրանից հետո ընկած ժամանակահատվածում նախընտրական քարոզչության ֆինանսավորմանը վերաբերող դիմում – բողոքներ չեն ստացվել:

Համադրելով Գենտրոնական բանկից ստացված տեղեկանքները կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը *Վ Ի Կ Ե Կ Ե* որ.

Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Գենտրոնական ընտրական հանձնաժողովի
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար՝



S. Բաբիկյան